

ՌՈՒՆԵՐՏ ԶԻԶՅԱՆ

*Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի փիլիսոփայության և
տրամաբանության ամբիոնի պրոֆեսոր,
փիլիսոփայական գիտ. դոկտոր*

ԿԱՐԻՆԵ ԱՂԱԲԱՐՅԱՆ

*Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի հայոց լեզվի և
տարրական ուսուցման մեթոդիկայի ամբիոնի դասախոս*

ՌԻՍԱՆՈՂՆԵՐԻ ԼԵԶՎԱԶԳԱՅՈՂՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

ՀՏԴ 378:372.8

Հոդվածում քննարկվում է ապագա ուսուցչի լեզվահաղորդակցական գործի-
մացությունների մշակման գործընթացը
լեզվազգացողության զարգացման հա-
մատեքստում: Ներկայացվում են առա-
ջարկներ ապագա ուսուցչի լեզվական
կարողությունների և հմտությունների
զարգացման ուղղությամբ, ինչը կապա-
հովի մասնագիտական առարկաները
պատշաճ մակարդակով դասավանդելու
նրա հաջողությունը:

**Հանգուցային բառեր և արտահայտու-
թյուններ՝** լեզվազգացողություն, մտածո-
ղություն, հաղորդակցական գործիմացու-
թյուն, բարոյական արժեքներ, լեզվական
կարողություններ ու հմտություններ:

Մեր երկրի անցումը բարձրագույն
կրթության նոր հայեցակարգի՝ պայմա-
նավորված Բոլոնիայի համաձայնագրի
պայմանների կատարմամբ, էական ազ-
դեցություն է թողել ուսուցման գործըն-
թացների վրա: Բոլոնիայի հռչակագրի
շրջանակներում, մասնավորապես, ան-
հրաժեշտություն է առաջանում վերաի-
մաստավորելու նաև ապագա ուսուցիչ-
ների պատրաստման գործընթացը: Այս
առումով առանցքային խնդիրներից մե-
կը, մեր կարծիքով, ապագա ուսուցչի լեզ-

վազգացողության ուսումնասիրումն է և
դրա զարգացումը ուսուցման գործընթա-
ցում: Մանկավարժական համալսարանի
ուսուցման ողջ համակարգի գլխավոր
նպատակը ուսանողների մեջ մասնագի-
տական առարկաները պատշաճ մակար-
դակով դասավանդելու հմտությունների
ու կարողությունների ձևավորումն է: Իր
աշխատանքային գործունեության ըն-
թացքում երիտասարդ ուսուցիչը պետք է
մշտապես շփվի դպրոցականների հետ,
և նրա խոսքը պետք է օրինակ ծառայի
վերջիններիս համար: Ուստի ապագա
ուսուցչի լեզվահաղորդակցման կարո-
ղության և հմտության զարգացումը, որի
հիմքը լեզվազգացողությունն է, մանկա-
վարժական համալսարանական կրթու-
թյան արդի կարևորագույն խնդիրներից
մեկն է: Մայրենի լեզվին բարձր մակար-
դակով տիրապետելու դեպքում միայն
ապագա ուսուցիչը հնարավորություն
կունենա աշակերտներին մատչելի և հե-
տաքրքիր ներկայացնելու գիտելիքների
հիմունքներն ու կարևոր նրբությունները:

Լեզվազգացողության դերն էլ ավելի
մեծ է մատաղ սերնդի բարոյահայրենա-
սիրական դաստիարակության գործում:
Այս ոլորտում ամենաորոշիչը ուսուցչի

համոզիչ խոսքն է, որի նախապայմաններից մեկը, անկասկած, մայրենի լեզվին պատշաճ մակարդակով տիրապետելն է, ինչը հնարավորություն կտա արտահայտելու մտքի կարևոր երանգները, ազդելու լսարանի ամենանուրբ և խորը զգացմունքների վրա: Մայրենի լեզվի հզորության ու հարստության գիտակցումն այն կարևոր լծակն է, որի միջոցով կարելի է ստեղծել պահանջկոտության մթնոլորտ յուրաքանչյուրի խոսքի հանդեպ: Դա իր հերթին կնպաստի ուսանողների լեզվի մաքրությանն ու անաղարտությանը, նրանց լեզվազգացողության մակարդակի բարձրացմանը:

Արդի պահանջների լույսի ներքո լեզվազգացողության զարգացման գործում ճիշտ չէր լինի սահմանափակվել միայն ուսանողներին իմաստաբանական ու ռճաբանական անհրաժեշտ գիտելիքներ հաղորդելով և այդ գիտելիքների յուրացման մակարդակը ստուգելով: Անբավարար է նույնիսկ համալսարանական ուսումնառության տարիների ընթացքում ապագա ուսուցչի գործունեության համար անհրաժեշտ՝ մայրենի լեզվի արտահայտչական ձևերի հարուստ շտեմարանից օգտվելու կարողությունների և հմտությունների ձեռքբերումը: Ապագա ուսուցչի լեզվազգացողության զարգացման գործում առավել կարևորվում է բանավոր խոսքի զարգացմանը նպաստող ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը:

Մայրենի լեզվին անդրադարձել են մեր մտավորականներից շատերը՝ հիմնականում շեշտը դնելով լեզվի որպես մտածողության արտահայտման միջոցի, որպես հաղորդակցության, ժամանակակիցների և սերունդների միջև շփման, որպես լեզվապահպանության, լեզվի անաղարտության և ազգապահպանության գործիքի վրա: Մ. Նալբանդյանը, մասնավորապես, «Ասվում է լավելու հա-

մար» հոդվածում գրում է. «Մենք որչափ կարողացել ենք քննել և ճանաչել, հասկացել ենք, որ մարդուս լեզուն այն ժամանակ կարող է խոսել, ինչ ժամանակ միտքը արդեն խոսելի բանը դասավորում է, պատճառ, որ խոսքը, որ ձայնավորված լավում է օդի մեջ մեր բերանից, մեր իսկ մտքի ծնունդն է» [1, էջ 324]: Նալբանդյանը մատնացույց է արել լեզվի մի այլ բնորոշ կողմ ևս, որը սերտորեն առնչվում է նրա մյուս հատկանիշներին ու գործառական կողմերին. դա մարդկային փորձի արտացոլման, կուտակման ու պահպանման յուրահատկությունն է: Նալբանդյանը լեզվի իմացության օգտակարությունը տեսնում է նաև նրա՝ «պահարան գիտելեաց» լինելու առանձնահատկության մեջ: Նա լեզվի այդ յուրահատկության հետ է կապում նաև լեզվի հասկանալիության կարևորությունը. «Ինձ այնքան անհրաժեշտ չէ տեսնել, որ ինձ հետ խոսող մարդը խոսեր այնպես, ինչպես ես եմ խոսում. խնդիրը բացառապես այն է, որ նա հասկանա ինձ: Հասկանալն առաջին քայլն է. ինչ որ ներկա սերունդը կհասկանա, այդ աքցանով էլ չի կարելի պոկել հաջորդ սերունդներից» [1, էջ 327]:

Հայոց լեզուն միշտ եղել է մեր դասական գրողների հպարտությունը և նրանց մեջ հավատ է ներշնչել հայ ժողովրդի հզոր ուժի և դերի նկատմամբ: Լեզվի միջոցով կարելի է արտահայտել մտքի բոլոր նրբերանգները, բացահայտել մարդկային հոգու ամենախոր զգացմունքները: Պատահական չէ, որ լեզուն համարվում է մարդու ամենազարմանալի զենքերից մեկը: Մանկավարժական համալսարանի ողջ անձնակազմի, հատկապես լեզվաբանների պատվի խնդիրն է ապագա ուսուցիչներին զինել այդ հզոր զենքով, նրանց մեջ արմատավորել այդ հրաշագործ զենքից վարպետորեն օգտվելու հմտությունները:

Ինչպես նշվեց, ապագա ուսուցչի լեզվահաղորդակցման կարողության և հմտության զարգացման հիմքում նրա լեզվազգացողությունն է: Ապագա ուսուցչի խոսքի համոզչությունը և մտքերն արտահայտելու ճշգրտությունը ուսումնականական գործունեության կարևորագույն բաղադրիչներն են, որոնց ապահովումը էապես կախված է նրանց լեզվազգացողության մակարդակից: Ուստի համալսարանական ուսուցման տարիներին անհրաժեշտ է զարգացնել նրանց լեզվազգացողությունը՝ բառապաշարը մշտապես հարստացնելու, մայրենի լեզվի ռճական գանձարանը նրանց մատուցելու և նրանց մեջ համապատասխան հմտություններ արմատավորելու միջոցով:

Լեզվազգացողություն ասելով՝ մենք հասկանում ենք կոնկրետ անձի՝ գործնական իրավիճակներում հաճախակի հանդիպող տեքստերի և հաղորդագրությունների լեզվական առանձնահատկություններն ու բարդությունները որպես լեզվական կարողությունների և հմտությունների համախումբ՝ ընկալելու ունակությունը, ինչը թույլ կտա սեփական մտքերն արտահայտել անադարտ մայրենիով: Լեզվազգացողության ձևավորման կարևորագույն խնդիրը յուրաքանչյուր քաղաքացու համար սեփական գործունեության տիրույթում և անձնական շրջապատում խոսքային շփման համապատասխան մակարդակի ապահովումն է: Լեզվազգացողության գաղափարախոսությունը յուրաքանչյուր դպրոցականի և երիտասարդ մասնագետի հորդորում է սիրել մայրենին, անընդհատ զարգացնել մայրենի լեզվով արտահայտվելու և հաղորդակցվելու կարողությունները: Ուսանողների լեզվազգացողության առկայությունը և նրա մակարդակը դրսևորվում է հիմնականում հաղորդակցման գործընթացում:

Մեր հետազոտություններում մենք ղեկավարվում ենք այն ռազմավարական սկզբունքով, որ լեզվազգացողության ձևավորման ու զարգացման առավել արդյունավետ եղանակը դիդակտիկ վարժությունների և տեքստերի կիրառումն է:

Վերջին երկու տասնամյակի ընթացքում, Հայաստանի անկախության ձեռքբերման արդյունքում, նշմարվում է գրական լեզվի կայուն ազդեցությունը հասարակության, առավելապես մտավորականների և ուսանողների խոսակցական լեզվի վրա: Պատմական այս օբյեկտիվ իրողության լույսի ներքո ուսանողների լեզվազգացողության ձևավորման ուղիների մեր վերլուծության հիմքում ընկած են ուսանողների կողմից արդի գրական հայերենին տիրապետելու մեթոդիկաները:

Բոլոր ժամանակներում մայրենի լեզվի և գրականության դասավանդումը ծառայում է ևս մեկ գերխնդիր լուծելուն, այն է՝ հայրենասիրության դաստիարակմանը և բարձր բարոյական արժեքների ձևավորմանը: Ձևափոխվող հասարակության դարաշրջանում այսօրինակ ավանդույթը ոչ միայն շարունակում է մնալ նշանակալի երևույթ, այլև անցումային շրջանում համարարկային բարոյական արժեքների կտրուկ անկման պայմաններում նյութական հարստության անհագուրդ մոլուցքի ճնշման ներքո վերածվում է խիստ կարևոր խնդրի: Այդ իսկ պատճառով լեզվազգացողության զարգացման առաջարկվող մեթոդիկայի կարևորագույն սկզբունքներից մեկն, անտարակույս, պետք է լինի դպրոցականների և ուսանողների մեջ հայրենասիրության և բարոյական արժեքների ձևավորման և զարգացման նպատակաուղղվածությունը:

Ապագա ուսուցիչների լեզվազգացողության զարգացման աշխատանքները պլանավորելիս անհրաժեշտ է հաշվի առ-

նել արդի պայմանների նորարարական, կարելի է ասել, հեղափոխական ոգին: Առաջին հերթին մենք նկատի ունենք տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների և կոնկրետ ուսումնական գործընթացում արդյունավետորեն կիրառվող տեխնիկական միջոցների աննախադեպ տարափը: Ոչ պակաս կարևոր գործոն է նաև Բոլոնիայի համաձայնագրի պայմանների ընդունումը հայրենական բարձրագույն կրթության ոլորտում: Կյանքի նոր պահանջներին համահունչ ապագա ուսուցիչը համալսարանում ուսանելու տարիներին պետք է յուրացնի ուսուցման ժամանակակից միջոցների բազմազանությունը, տիրապետի ուսուցման ինտերակտիվ մեթոդներին, ձեռք բերի համացանցից օգտվելու հմտություններ և այլն, և այլն: Կյանքի և տեխնիկական միջոցների առաջընթացի մշտական արագացումը ապագա ուսուցչի առաջ անհետաձգելի խնդիր է դնում մշտապես զբաղվելու իր մասնագիտական կատարելագործմամբ, այդ թվում նաև սեփական լեզվի և խոսքի կատարելագործմամբ: Իսկ դա հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե համալսարանն ապագա ուսուցչի հոգում ոչ միայն սեր սերմանի մայրենի լեզվի հանդեպ, այլ նաև սովորեցնի նրան ջանք չխնայել՝ մշակելու բարելավելու, սեփական լեզուն ու խոսքը:

Լեզվազգացողություն երևույթը ուսումնասիրվել է բազմաթիվ հետազոտողների կողմից: Մասնավորապես, Մ.Մ. Գոհլերները և Գ.Վ. Էյգերը հետազոտել են լեզվազգացողության գործողության ընդհանուր մեխանիզմը՝ առաջ քաշելով այն վարկածը, որ լեզվական ունակությունների ցուցանիշներն են բառերի միջև արագ և հմտորեն կապեր ձևավորելը, բառային նյութ ստեղծելու և գործառնական լեզվական ընդհանրացումները արագ կատարելու ունակությունների առ-

կայությունը, խոսքային գործունեության ընթացքում փոխակերպման գործընթացների ճկունությունը [2]:

Ի. Տ. Վասիլևան իր աշխատությունը նվիրել է ամբողջական տեքստի ընկալման չգիտակցվող մեխանիզմի հետազոտմանը՝ ենթադրելով, որ ամեն կոնկրետ իրավիճակում տվյալ անհատի լեզվազգացողությունը դրսևորվում է ենթագիտակցության մակարդակի վրա: Ըստ որում, լեզվազգացողության այդպիսի դրսևորման որևէ մեխանիզմ նրա կողմից չի քննարկվում [3]: Լեզվազգացողության դրսևորման չգիտակցված, ներգացողական մեխանիզմների բացահայտմանն են նվիրված Ա.Ս. Բուգայի հետազոտությունները, որոնց հենքը տեքստերի ընթերցման ժամանակ ի հայտ եկող ոչ բառային պատկերներով կատարվող գործողությունների գոյության ենթադրությունն է [4]:

Բազմաթիվ հետազոտություններ նվիրված են լեզվի որոշակի միջոցների ձեռքբերման հոգեբանական կոնկրետ մեխանիզմների ուսումնասիրմանը: Այսպես, Ա.Մ. Օրլովան իրականացրել է աշակերտների կողմից բառակապակցությունների և ծավալվող նախադասությունների տարբերական խնդրի փորձարարական հետազոտում [5]: Բ. Ի. Դոդոնովը հետազոտել է նախադասություններն ըստ տեսակների դասակարգման խնդիրը [6]: Ե. Դ. Բոժովիչն իր ուշադրությունը բնեռել է լեզվական նյութի իմաստաբանական կողմի վրա, չնայած որ իր ուսումնասիրություններում նա ընդունում է լեզվազգացողության դրսևորման ներգացողական, անգիտակցական բնույթը [7, 8]:

Որպես կանոն, մատնանշվում է լեզվազգացողության քննարկման մի քանի ուղղություն [9].

- լեզվական նյութի ընկալում և օգտագործում՝ հիմնված խոսքային գործ-

նական կարողությունների վրա,

- լեզվի օգտագործման հմտություն՝ ձևավորված համապատասխան տեսական գիտելիքների յուրացման և բազմաթիվ ուսումնական վարժությունների գործնական կիրառումների արդյունքով,
- բառի ընկալում՝ իր ողջ իմաստային բազմազանությամբ:

Լեզվազգացողության բնույթի մասին հարցը Մ. Մ. Գոհլերները և Գ. Վ. Էյգերը այսպես են մեկնաբանում. «Լեզվազգացողության հարցում մենք գործ ունենք ինտելեկտուալ հույզերի, զգացմունքների հետ, որոնք ուղեկցում են հույզերի առաջացմանն ու ընկալմանը՝ արտահայտելով նրա նշանակությունը յուրաքանչյուր սուբյեկտի համար: Այս մեխանիզմն ի հայտ չի գալիս, երբ խոսքը իրականացվում է սահուն, առանց արգելքների: Սակայն երբ խոսքային մեխանիզմում ի հայտ են գալիս արգելքներ, մեխանիզմն սկսում է գործել բանավոր խոսքի տարրերի հարաբերությունների ապրումների տեսքով, որ երբեմն սխալի հանդիպելիս արտահայտվում է տհաճության զգացումով: Ժխտման այդ անմիջականությունը հիմնական զգացմունքային հակազդման տրպակորություն է թողնում, իսկ իրականում այն երկրորդական է» [2, էջ 139]:

Դժվար չէ նկատել, որ լեզվազգացողության վերը բերված մեկնաբանումը հիմնված է զգացողություն բառի հիմնական, հոգեբանական ըմբռման վրա, որն արտահայտում է մարդու զգայական վերաբերմունքը որոշակի առարկայի կամ երևույթի նկատմամբ: Այս հանգամանքն իսկապես հաճախ է հանդիպում տարբեր մարդկանց խոսքային դրսևորումներում: Երբ մենք մեր շրջապատում ականատես ենք լինում բառակապակցությունների միանգամայն անհարիր օգտագործմանը կամ մայրենի լեզվի աղավաղման դրսևո-

րումներին, մեր մեջ առաջանում են տարբեր աստիճանի բացասական զգացումներ: Դրա հետ մեկտեղ լրատվական տարբեր միջոցներում (հեռուստատեսություն, ռադիո և այլն) տեղ գտած մայրենի լեզվի անթույլատրելի աղավաղումները հարուցում են հազարավոր մարդկանց իրավացի վրդովմունք: Այսպես, նույնիսկ պատկառելի հրատարակություններում տեղ գտած լեզվագործածության մեջ կատարվող որոշ նորամուծություններ, իրենց հեղինակների կամքից անկախ, առաջ են բերում մրտքի գավեշտալի աղավաղումներ: Չի կարելի թերագնահատել նաև դասականներին ընթերցելու ժամանակ առաջացող դրական զգացումների դերն ու նշանակությունը: Կախված բնությունից օժտված լեզվական տաղանդի, ինչպես նաև խոսքի կառուցման հմտության աստիճանից՝ մարդուն տրված է որոշակի հոգեկան վերելք վերապրել՝ պայմանավորված խոսքի մշակույթի ասպարեզում ձեռք բերած իր հաջողություններով, ընկերական միջավայրում տեղին կիրառված բառախաղի օգտագործմամբ կամ դասախոսության ավարտին ձևակերպված մտքի հստակությամբ և այլն: Այսուհանդերձ, ինչպես իրավացիորեն նկատել են տվյալ մոտեցման հեղինակները, լեզվազգացողության մեկնաբանման մեջ զգացական հարաբերությունը ամենակարևոր կողմը չէ: Դա թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ լեզվազգացողություն հասկացության մեջ զգացողություն բառը հանդես է գալիս ոչ թե իր գլխավոր զգացական, այլ ավելի նեղ, յուրահատուկ իմաստով: Զգացողություն բառն այստեղ ձեռք է բերում մայրենի լեզվում ճշգրիտ կողմնորոշվելու, մայրենիի նրբությունները ճշգրիտ ընկալելու ունակության իմաստ: Իսկապես, հազիվ թե որևէ մեկի մասին ասեն, որ նա օժտված է

լեզվազգացողությամբ, եթե նա ունակ չէ ընկալելու մայրենիի նրբերանգները: Եվ հակառակը, եթե մարդը տիրապետում է մայրենի լեզվին, նա առանց դժվարության կողմնորոշվում է մայրենիի արտահայտչաձևերի նրբությունների մեջ, ապա կարելի է ասել, որ նա ունի զարգացած լեզվազգացողություն:

Լեզվազգացողություն հասկացության մեկնաբանման ժամանակ մենք պետք է զերծ մնանք զգացողություն բառը սովորական իմաստով ընկալելուց: Փաստորեն այդ դիրքերից է առաջարկում իր մեկնաբանությունը Վ. Ե. Յակովչենկոն, ըստ որի՝ լեզվազգացողության ձևավորումը դինամիկ գործառնական համակարգ է: Համաձայն նրա մեկնաբանման՝ լեզվազգացողությունը որոշակի կոնկրետ լեզվի իմացությունն է, կոնկրետ իրավիճակներում տվյալ լեզվի հաղորդակցական և արտահայտչական միջոցներից օգտվելու կարողությունը՝ որոշակի նպատակի հասնելու համար [10]:

Իրոք, որպեսզի անհատը կարողանա արդյունավետորեն օգտվել տվյալ լեզվի հաղորդակցական և արտահայտչական միջոցներից, նա պետք է նախ սովորի ստույգ և ճշգրիտ ընկալել ու հասկանալ այդ միջոցները: Դա միանգամայն համընկնում է վերը կատարված այն ճշգրտմանը, որ լեզվազգացողություն հասկացության մեջ զգացողություն բառը հանդես է գալիս ոչ թե հոգեբանական իմաստով, այլ մատնանշում է, որ տվյալ անհատն ունի բավականաչափ զարգացած կարողություն՝ ճիշտ ընկալելու և ըմբռնելու մայրենի լեզվի հարուստ գանձարանը: Մյուս կողմից, Վ.Ե. Յակովչենկոյի դիրքորոշմանը բնորոշ է մի կարևոր առանձնահատկություն. այն ընդգծում է, որ անհատի լեզվազգացողությունը պետք է դրսևորվի որպես ակտիվ գործոն, որպես անհատի կարողու-

թյուն և հմտություն՝ պետք եղած պահին, կոնկրետ իրավիճակներում ճշգրտորեն և ազդեցիկ եղանակով կիրառելու մայրենի լեզվի արտահայտչական միջոցների հարուստ շտեմարանը: Այս հանգամանքը հատկապես կարևոր է մանկավարժական համալսարանի ուսանողների լեզվազգացողության զարգացման՝ մեր կողմից ուսումնասիրվող խնդրի տեսանկյունից, քանի որ ուսուցչի գործունեության առյուծի բաժինը հենց ակտիվ գործունեությունն է: Ուսուցիչը չի կարող իր մասնագիտական գիտելիքներն արդյունավետորեն փոխանցել աշակերտին, դարձնել նրա սեփականությունը, եթե իր կողմից մայրենի լեզվի արտահայտչամիջոցների իմացությունը, ինչքան էլ բարձր մակարդակի վրա լինի, լոկ պասիվ բնույթ կրի: Նա չի կարողանա այնպես մատուցել դասավանդվող նյութը, որ այն աշակերտների մեջ ոչ թե սեր, այլ գոնե հետաքրքրություն առաջացնի առարկայի հանդեպ, առանց որի հնարավոր չէ կազմակերպել արդյունավետ ուսուցումը:

Ե. Դ. Բոժովիչը առաջարկել է լեզվազգացողության բազմակողմանի բնորոշում՝ ընդգծելով լեզվազգացողության հետևյալ կարևոր գործառնությունները.

- արտահայտությունների որակական՝ ոճաբանական, բառային, դարձվածքային յուրահատկությունների անմիջական, միաժամանակյա բացահայտման ապահովում,
- խոսքային գործընթացների վերահսկում՝ հնարավորություն ընձեռնելով անմիջապես գնահատելու արտահայտությունների ճիշտ կամ սխալ, սովորական կամ անսովոր, նուրբ կամ կոպիտ լինելը,
- արտահայտության ենթատեքստը հասկանալու հնարավորության ընձեռում,
- յուրահատուկ ինտելեկտուալ զգա-

ցումների առաջացում [8, էջ 114]:

Մասնավարժական համալսարանի ուսանողների լեզվազգացողության զարգացման՝ մեր կողմից ուսումնասիրվող խնդրի տեսանկյունից այս բազմակողմանի մոտեցումն ուսանելի է հատկապես իր կոնկրետ, գործնական ուղղվածությամբ: Իրոք, ուսանողների հետ աշխատանքում անհրաժեշտ է ձևակերպել այնպիսի կոնկրետ խնդիրներ, որոնք նպատակաուղղված են ձևավորելու ոճաբանական, բառային, դարձվածքային յուրահատկությունների բացահայտման կարողություններ և հմտություններ: Հետազոտությանը գործնական ուղղվածություն է հաղորդում նաև անհատի լեզվազգացողության կողմից վերահսկում իրականացնելու պատասխանատու գործառնությունը, որը հնարավորություն է ընձեռում անմիջապես գնահատելու արտահայտությունների ճիշտ կամ սխալ, սովորական կամ անսովոր, նուրբ կամ կոպիտ լինելը: Անհատի հաղորդակցական պրակտիկայի տեսանկյունից նշանակալի է նաև արտահայտությունների ենթատեքստի իմացության գիտակցման կարևորումը, քանի որ այս հարցում թերացումը հետագայում կհանգեցնի գրավոր ու բանավոր խոսքի սխալների:

Ե.Դ. Բոժովիչի դիրքորոշման կապակցությամբ մենք ունենք նաև որոշակի վերապահումներ: Մեր կարծիքով, Ե.Դ. Բոժովիչը չափից ավելի կատեգորիկ է մատնանշում այն խոսքային գործողությունների և գնահատականների բնույթի անգիտակցականությունը, որոնցում ակնհայտորեն դրսևորվում է լեզվազգացողությունը: Մինչդեռ անհատի լեզվազգացողության ձևավորման գործընթացում նա ինքը բազմիցս ընդգծել է խոսքային փորձառության և նյութի իմաստային դերի կարևորությունը: Բայց եթե անհատի խոսքային փորձառությու-

նը նրա կողմից չգիտակցվեր, չմշակվեր նրա գիտակցության մեջ, ինչպե՞ս կիրականացվեր նրա անձնական փորձի ընդհանրացումը: Լեզվազգացողության ձևավորման գործընթացում, ինչպես նաև նրա ակտիվ դրսևորումների ժամանակ անհատի գիտակցության անվերապահ մասնակցության մեջ համոզվելու համար բավարար է դիտարկել նրա կողմից մարքենի լեզվի բարդ և նուրբ կողմերի ընկալման աստիճանը: Բարդ, խնդրահարույց իրավիճակները և լեզվական նուրբ երևույթները չեն կարող անհատի կողմից ընկալվել առանց որոշակի մակարդակի գիտակցված վերլուծության: Ավելին, քանի դեռ մենք կանգնած ենք լեզվի ու մտածողության միասնականության դրույթի հենքին, մենք իրավումնք չունենք լեզվական գործունեության ցանկացած երևույթ հեշտությամբ օտարելու գիտակցականի դաշտից և տանելու այն անգիտակցականի մույթ (համենայն դեպս գիտակցության լույսով չշաղախված) ոլորտ: Ամենայն հավանականությամբ, այն հանգամանքը, որ անհատի լեզվազգացողության դրսևորումները մեկնաբանվում են որպես չգիտակցվող գործողություններ, պայմանավորված է նրանով, որ լեզվական արտահայտությունների գնահատումները անհատի կողմից կատարվում են անմիջականորեն, առանց երկար-բարակ կշռադատելու, մեքենայաբար: Սրանով է պայմանավորված բնական թվացող եզրակացությունն այն մասին, որ լեզվազգացողության բնույթի հիմքում ընկած է անգիտակցականը: Այսպիսի պատկերացումների մեջ որոշակի ճշգրտումներ անելու նպատակով նկատենք, որ նման իրավիճակ ստեղծվում է նաև աշակերտների կողմից, օրինակ, թվաբանական վարժությունների լուծման ժամանակ: Իսկապես, քանի դեռ առաջադրանքը պարզ է և ծանոթ, աշա-

կերտներն այնպիսի արագությամբ և ճշգրտությամբ են այն լուծում, որ տեղիք են տալիս մտածելու, թե իրենք օժտված են ինչ–որ անգիտակցական, ինտուիտիվ ունակություններով: Սակայն մենք հակված չենք այդ մտքին, քանզի համոզված ենք, որ եթե սովորական, լավ սերտած վարժությունների փոխարեն աշակերտներին առաջարկվի քիչ թե շատ անսովոր վարժություն, ապա հոգս կցնդի անգիտակցականի, ինտուիցիայի մակարդակով կռահված ճշգրիտ պատասխանի մտապատրանքը: Ավելին, նոր վարժության լուծման ոչ այնքան բարդ եղանակը ոչ միայն կրկնակի բացատրության, այլև նմանատիպ վարժությունների բազմաթիվ օրինակներ լուծելու անհրաժեշտություն կառաջացնի, որպեսզի աշակերտներն ամբողջությամբ յուրացնեն նոր տիպի վարժությունների լուծման եղանակները: Դժվար չի լինի կանխատեսել, որ աշակերտների կողմից լեզվական արտահայտությունների անմիջական և մեխանիկական գնահատումների իրավիճակը նույնպես տրամագծորեն կփոխվի, եթե նրանց առաջարկվեն լեզվական ավելի բարձր մակարդակ ենթադրող առաջադրանքներ: Այսպես, կարելի է կանխավ ենթադրել, որ եթե միջին դասարանների աշակերտներին առաջարկվի ընտրություն կատարել ժամանակակից գրողի արձակ բանաստեղծության քառատողի և դրա զգալի պարզեցված տարբերակների միջև, ապա ոչ միայն կնվազի անմիջական և մեխանիկական գնահատման տարրը, այլև միշտ չէ, որ աշակերտների ընտրությունը կլինի հոգուտ բնագրի:

Վերևում մենք արդեն նշել ենք Ե.Դ. Բոժովիչի կողմից առաջ քաշված լեզվագագոթության հսկողական գործառնության գաղափարի դրական նշանակությունը: Սակայն երբ դրա հետ մեկտեղ

նշվում է, որ խոսքը արտահայտությունների ճիշտ կամ սխալ, սովորական կամ անսովոր, նույր կամ կոպիտ լինելու անմիջական գնահատման է վերաբերում, ապա Ե. Դ. Բոժովիչի կողմից հսկողական գործառնություն ընկալվում է որպես առաջարկված արտահայտությունների գնահատման գործառնություն: Մինչդեռ ավելի նշանակալի է անհատի լեզվագագոթության այն գործառնությունը, որով պայմանավորված է անհատի կողմից լեզվական այնպիսի արտահայտությունների կիրառությունը, որոնք թերևս ավելի համահունչ կլինեն նրա կոնկրետ խոսքի համատեքստին: Ե.Դ. Բոժովիչը նման դիրքորոշում է ցուցաբերում նաև լեզվագագոթության գործնական կիրառման համար կենտրոնական՝ լեզվական արտահայտությունների համատեքստի պրոբլեմին: Մեր կարծիքով, Ե.Դ. Բոժովիչը միանգամայն իրավացի է, երբ շեշտում է, որ անհատի կողմից դիտարկվող արտահայտության համատեքստի ընկալման հնարավորությունը նրա լեզվագագոթության հիմնական բնութագրերից մեկն է: Սակայն հարկ է նկատել, որ նրա ասածը վերաբերում է ուրիշի խոսքի համատեքստի բացահայտմանը: Մինչդեռ անհատի լեզվագագոթության կարևորագույն գործառնությունը սեփական խոսքային դրսևորման համատեքստի բացահայտումն է, քանզի առանց սեփական արտահայտությունների համատեքստի բնույթի ճշգրիտ գնահատման անհատը չի կարող ապահովել իր գրուցակցի կամ լսարանի հետ լեզվահաղորդակցվելու անհրաժեշտ մակարդակը: Մեր կարծիքով, անհրաժեշտ է, որ լեզվական գործունեության նշված որոշիչ հանգամանքի լույսի ներքո մշակվեն ժամանակակից մարդու կյանքում առավել հաճախ հանդիպող խոսքային համատեքստերի տարակարգումներ (տիպոլոգիա), այն

է՝ ելույթների և զրույցների տիպական օրինակներ: Այս առումով, առավել համոզիչ է լեզվազգացողության էության բնութագիրը՝ առաջարկված գերմանացի գիտնական Ֆ. Կայնցի կողմից, որտեղ ընդգծվում է լեզվազգացողության տրամաբանական կողմը: Ըստ Ֆ. Կայնցի՝ լեզվազգացողությունը տրամաբանական հակիրճ գործընթաց է, որը լեզվագործունեության ընթացքում ձևավորվում է հիշողության, զուգորդության, չկանխամտածված մտավարժանքի հիմքի վրա [1]:

Լեզվազգացողության ընդհանուր տեսության մշակման խնդրի տեսանկյունից համոզիչ է նաև Ե.Գ. Բոժովիչի ձևակերպումը, համաձայն որի՝ լեզվազգացողությունը մի մեխանիզմ է, որն իրականացնում է լեզվական միավորների ընտրության, նրանց օգտագործման վերահսկման գործընթացը, երբ քերականականի և շարահյուսականի հարաբերակցությունը ունի օբյեկտիվորեն ոչ ձևական, փոփոխական բնույթ [8, էջ 124]:

Հիշարժան է նաև Ե. Գ. Բոժովիչի հետևյալ դիտողությունը լեզվի օրենքների դիսամիկ բնույթի մասին. «Լեզվի օրենքը կայունության (լեզվական միավորների և տարբեր մակարդակների կառույցների հստակ համակարգի) և շարժունության (այդ միավորների կիրառման և կառուցման կանոնների փոփոխման) հետ մեկտեղ ունի նաև փոփոխվելու հատկություն: Տարբեր դեպքերում այն ներառում է բազմաթիվ տարբերակներ՝ մնալով որոշակի սահմաններում: Այստեղից էլ բխում է այս կամ այն նորմի, նրանով սահմանված պահանջների ճկունության կամ կարծրության պահանջման չափի տարբերությունը» [8, էջ 184]: Այս ըդհանուր բնութագիրը, մեր կարծիքով, միանշանակորեն վերաբերում է նաև լեզվազգացողության նորմերին: Այս առթիվ նպատակահարմար կլինի տարբերակել լեզվազգացողություն

հասկացության լայն և նեղ իմաստները: Լեզվազգացողություն հասկացությունը լայն իմաստով օգտագործելիս նկատի է առնվում տվյալ լեզվի բոլոր բառերի օգտագործումը բոլոր գործնական իրողություններում: Նշված մոտեցման դեպքում լիովին բավարար է Լ. Ի. Հադարովայի վերոբերված դասակարգումը [9]: Սակայն ուսանողների լեզվազգացողության զարգացման տեսանկյունից առավել կարևոր է լեզվազգացողություն հասկացության նեղ իմաստը, որը շեշտադրում է լեզվի բարձր մակարդակի արտահայտչամիջոցներին, առաջին հերթին՝ գրական լեզվի հարուստ զինանոցին և գրական ոճի բազմաթիվ եղանակներին տիրապետելը:

Լեզվազգացողության մեր ըմբռնմանն առավել մոտ է Ս.Վ. Տիտովայի խմբագրությամբ հրատարակված հեղինակների խմբի «Հաղորդակցական մշակույթ» աշխատության մեջ առաջ քաշված մոտեցումը [12]: Հենվելով դպրոցական ծրագրային պահանջների վրա՝ Ս.Վ. Տիտովան տալիս է հաղորդակցական գործիմացության հետևյալ հիմնական բնութագրերը.

1. տեղեկացվածություն լեզվաբանական տեսության հիմունքներին, նրա ընկալումը որպես օրենքների և ընդհանրական կանոնների համակարգի, որոնց միջոցով կանոնակարգվում է լեզվական միջոցների օգտագործումը,

2. տիրապետում խոսքային գործունեության հիմնական տեսակներին,

3. տիրապետում հիմնական լեզվական (նույնականացնել, դասակարգել և այլն) և խոսքային (ընտրել, արդիականացնել և այլն) կարողություններին,

4. խոսքային իրավիճակների վերլուծության կարողություն և դրան համապատասխան խոսքային վարքի (բառային և ոչ բառային) ծրագրի ընտրություն [12, էջ 13]:

Եվ չնայած այն բանին, որ «Հաղորդակցական մշակույթ» աշխատության

մեջ լեզվազգացողություն հասկացությունը հանդիպում է ընդամենը մեկ անգամ, վերը բերված հաղորդակցական գործիմացության բնութագրերի համախումբը զարմանալի ամբողջականությամբ նախանշում է այն գործնական քայլերը, որոնք կարող են նպաստել լեզվազգացողության արդյունավետ ձևավորմանն ու զարգացմանը: Իսկապես, պատկերացնենք, որ մենք, աշխատելով մի խումբ սովորողների հետ, հասել ենք այսպիսի արդյունքների.

ա) սովորողները ձեռք են բերել լեզվաբանական տեսության և դրա օրենքների ու կանոնների համակարգի որոշակի իմացություն, խոսքային գործունեության գործընթացներում լեզվական միջոցները կիրառելու կարողություն,

բ) սովորողները տիրապետում են խոսքային գործունեության հիմնական տեսակներին՝ յուրաքանչյուր կոնկրետ խոսքային իրավիճակին համահունչ:

Մի՞թե ակնհայտ չէ, որ շնորհիվ մեր կատարած աշխատանքի՝ տվյալ խմբի սովորողների մեջ խոսքային պրակտիկայում կդրսևորվի լեզվազգացողության բավականին բարձր մակարդակ: Նրանք կխոսեն գրագետ և հմտորեն կօգտագործեն լեզվագործունեության հիմնական տեսակները:

Այսպիսով, ա) և բ) կետերին համատասխան իրականացվող ուսուցումը կապահովի սովորողների լեզվազգացողության ձևավորման բավականաչափ բարձր մակարդակ: Մինչդեռ, դժվար չէ նկատել, որ ա) և բ) կետերը վերը բերված հաղորդակցական գործիմացության չորս բնութագրերի սեղմ շարադրանքն են:

Այսուհանդերձ, կենտրոնանալով մեր ուսումնասիրության խնդրի վրա, այն է՝ տարրական դպրոցի ապագա ուսուցչի լեզվազգացողության զարգացումը, չենք կարող բավարարվել Ս. Վ. Տիտո-

վայի առաջարկած չորս բնութագրերով: Ուսուցիչը ոչ միայն պարտավոր է տիրապետել լեզվական գործիմացության նվազագույն մակարդակին. անհրաժեշտ է նաև, որ նրա մեջ ի սկզբանե ձևավորվի լեզվական կարողությունները անընդհատ կատարելագործելու պահանջը: Յուրաքանչյուր ուսուցիչ պետք է ձգտի մայրենի լեզուն կրողի օրինակ լինել իր աշակերտների համար: Ինչ վերաբերում է տարրական դպրոցի ապագա ուսուցիչներին, ապա հատկապես նրանց լեզվազգացողությունը պետք է դառնա այն նվազարանը, որի հնչյունները աշակերտների սրտում սեր և հետաքրքրություն կսերմանեն մայրենի լեզվի և մայրենի խոսքի հանդեպ:

Լեզվազգացողությունը, որպես կանոն, ընկալվում է իբրև խոսքի մշակույթ արտահայտության պատկերավոր հոմանիշ: Լեզվազգացողությունը, ինչպես նաև խոսքի մշակույթը ողջ հանրության և, առաջին հերթին, կրթական համակարգի առջև պատասխանատու խնդիր են դնում՝ մայրենի լեզվի յուրացման ամենաբարձր մակարդակի ապահովում: Ըստ որում, ուշադրության կենտրոնում ոչ թե լեզվի տեսության բարձրակարգ իմացությունն է, ինչով անխոց և մշտապես զբաղվում է հանրակրթական համակարգը, այլ գործնական լեզվահաղորդակցության անհրաժեշտ մակարդակի ապահովումն իր բոլոր դրսևորումներով, ինչպես հանրային և պաշտոնական ելույթներում՝ որպես զանգվածային տեղեկատվության միջոցների լեզու, այնպես էլ ամենօրյա կենցաղային շփումներում՝ որպես յուրաքանչյուր քաղաքացու լեզվահաղորդակցության միջոց: Այստեղ, իհարկե, գոյություն ունեն կարգախմբերի և շեշտադրումների որոշակի տարբերություններ: Հանուն խոսքի մշակույթի մարտնչողներին բնորոշ է անզիջում պայքա-

ըը լեզվական գոեհկաբանությունների դեմ: Մինչդեռ լեզվագագոդության գաղափարախոսությունը կոչ է անում բարձրագույնի՝ մայրենի լեզվի հանդեպ սիրո, մայրենի լեզվի գանձարանի կատարյալ տիրապետման յուրաքանչյուր սովորողի և մասնագետի կողմից, կենդանի խոսքին տիրապետելու կարողությունը անընդհատ կատարելագործելու ձգտման:

Այսպիսով, լեզվագագոդությունն ասելով՝ մենք հասկանում ենք կոնկրետ անհատի կողմից լեզվի յուրահատկությունները և լեզվական տեքստերն ու հաղորդումները պատշաճորեն ընկալելու ունակությունը, ինչպես նաև (ինչն ավելի կարևոր է) մայրենի լեզվով սեփական մտքերն արտահայտելու համար անհրաժեշտ լեզվական ունակությունների և կարողությունների համախումբը:

Ուսանողի լեզվագագոդության զարգացման խնդրի մեջ մենք առանձնացնում ենք երկու ենթախնդիր.

1. գրավոր տեքստերի և բանավոր հաղորդումների պատշաճ ընկալում ամենօրյա շփումներում և մասնագիտական

գործունեության ընթացքում,

2. սեփական մտքերը հստակ, հասկանալի և համոզիչ արտահայտելու հմտություն:

Համապատասխանաբար, մեր ուսումնասիրության առարկայի մեջ ևս առանձնացնում ենք երկու հիմնական ենթախնդիր: Դրանցից առաջինը ներառում է այն լավագույն մակարդակի ուսումնասիրումն ու բացահայտումը, որի առկայությամբ ապագա ուսուցիչն իր աշխատանքային գործունեության ընթացքում լուրջ դժվարությունների չի հանդիպի տարաբնույթ և մշակութային տարբեր մակարդակների փաստացի տեքստեր ընկալելիս և մեկնաբանելիս: Երկրորդը (ինչը թերևս ավելի կարևոր է) լեզվագագոդության այն նվազագույն մակարդակի բացահայտումն ու ուսումնասիրումն է, առանց որի ապագա ուսուցիչը ի գործ չի լինի աշակերտներին պարզ և հասկանալի ներկայացնելու դասավանդվող առարկայի բովանդակությունը:

Հոդվածի ներկայացման ամսաթիվը՝ 15.11.2012

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Մ. Նալբանդյան**, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 324, 327:
2. **Гохлернер М. М., Ейгер Г. В.** Психологический механизм чувства языка // Вопросы психологии. 1983. №4.
3. **Васильева И. Т.** Бессознательное в естественных и учебных условиях овладения языком // Бессознательное: природа, функции, методы исследования: В 3 т. Под общ. ред. **Прангишвили А. С., Широкия А. С., Басина Ф. В.** Т. 3. Тбилиси, 1978.
4. **Буга А. С.** Чувство языка: парадигмы исследования, www.psyedu.ru, Электронный журнал «Психологическая наука и образование», /ISSN: 2074-5885/ 2011, № 4.
5. **Орлова А. М.** К вопросу об объективной обусловленности так называемого «чутья языка» // Вопросы психологии. 1955, №5.
6. **Додонов Б. И.** Процесс категориального узнавания грамматического материала // Вопросы психологии. 1959, № 2.
7. **Божович Е. Д.** О функциях чувства языка в решении школьниками семантико-синтаксических задач // Вопросы психологии, 1988, №4, С. 70-78.
8. **Божович Е. Д.** Учителю о языковой компетенции ребенка. Психолого-педагогические аспекты языкового образования. М., Изд., 2002.
9. **Айдарова Л. И.** Психологические проблемы обучения младших школьников русскому языку. М.: Педагогика, 1978. – 143 с. (էջ 111-114).

10. **Яковченко Е. В.** Экспериментальное исследование языковой способности в условиях учебного двуязычия, Диссертация на соискание ученой степени кандидата филологических наук. Барнаул, 2003.
11. **F. Kainz**, Psychologie der Sprache. Bd. 1. Stuttgart, 1941. 3. Aufl. 1965.
12. **Титова С. В.** (ред) Коммуникативная культура. От коммуникативной компетентности к социальной ответственности, 1-е издание. – СПб.: Питер, 2009.

ВОПРОСЫ РАЗВИТИЯ ЧУВСТВА ЯЗЫКА СТУДЕНТОВ В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ

ДЖИДЖЯН РОБЕРТ

Доктор философских наук, профессор кафедры философии и логики Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна

АГАБАБЯН КАРИНЕ

Преподаватель кафедры методики армянского языка и начального обучения Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна

В статье обсуждается процесс формирования навыков языковой коммуникабельности у будущего учителя в контексте развития чувства языка. Приводятся предложения, направленные на развитие языковых навыков и умений учителя, что создаст определенные предпосылки для успешного преподавания предметов на должном уровне.

Дата представления статьи: 15.11.2012

THE PROBLEMS OF DEVELOPING STUDENTS' LANGUAGE FEELING ABILITIES IN MODERN CONDITIONS

ROBERT DJIDJIAN

Doctor of Philosophy, Professor of the Chair of Philosophy and Logic, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

KARINE AGHABABYAN

Lecturer of the Chair of the Armenian Language and Primary Education Methods, Armenian State Pedagogical University after Kh. Abovyan

The process of developing the language communication capacity of future high school teachers in the context of language feeling is discussed in the article. Some suggestions for developing the language abilities of future teachers to the extent that hence it should provide successful teaching at a proper level are presented.

Article submission date: 15.11.2012